# Համաձայնագիր-2

## 03.02.2020թ. կնքված N ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/1-2 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

«28» դեկտեմբերի 2020թ.

ք. Երևան

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «Քլիներս» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Գ. Պապիկյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 03.02.2020թ. կնքված N ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/1-2 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1. Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ծառայության մատուցման ժամկետը (վերջնաժամկետը) երկարաձգել՝ այն սահմանելով մինչև 2021 թվականի հունվարի 29-ը:

1.2. Պայմանագրի 4.1 կետով նախատեսված Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը սահմանել 18 064 588 (տասնութ միլիոն վաթսունչորս հազար հինգ հարյուր ութսունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

1.3. Սույն համաձայնագրով ավելացված ժամանակահատվածի համար մատուցվելիք ծառայությունների դիմաց 2021թ. կհատկացվեն համապատասխան ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան ____________
/ստորագրություն/ Կ.Տ/

**ԿԱՏԱՐՈՂ**

«Քլիներս» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտասի 36գ. բն 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570018464820100
ՀՎՀՀ 00130286
Տնօրեն

Գ. Պապիկյան ____________
/ստորագրություն/ Կ.Տ/